

ձրացնէր, վրդովելով ի տես նոյն անկարգութեան՝ որ կը տեսէր միշտ. «Քահանայք, կ'ըսէ, ի մէջ քաղաքի շրջեալք, եւ կանայք ի վանորայս բնակեալ, սեղանակից եւ տնակից եղեալ» (Յոր. Ա, Գ), ուր լոկ ծառայութենէ աւելի ծանր խանգարմանց ամբաստանութիւնն է որ կը լսուի:

Եթէ այդ վկայութեանց համեմատ աշխարհաբնակ զեղծ կրօնաւորք համեմատաբար սակաւ են թուով, մենաստանաց մէջ մուտ գործած թուլութիւնն ու վատթարումն աւելի ընդհանուր էր, դատելով Եղիշէի եւ Կիրակոսի նկարագրածէն. այնպէս որ Սանահնի, Թանահատի ու Խոտակերաց չորաբեկութիւնն ու ժուժկալութիւնը զարտուղութիւն կը կազմէին՝ նման միւս անհատական օրինակաց խստամբերութեան՝ զոր տեսանք վերեւ:

Մենաստանք ամէն ժամանակ եւ ամէն աշխարհաց մէջ դաստիարակ ու խնամակալ հանդիսացած են ուսմանց, առաւելապէս եկեղեցականաց, եւ փոքր ի շատէ բոլոր միւս գիտութեանց ալ, որոց բարգաւաճման յուղթի անդաստանն էր վանական ժուժկալ ու տեսական կենցաղը: Ուսումն՝ հաւատարիմ ու մտերիմ ընկերն էր անզբաղ մենակեցին, եւ կրօնական նկարագրովը՝ շղթայն իրեն եւ իւր կոչ-